ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1950 Общественные науки

Գ. Գրիգորյան

ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(1867—1944)

Մադաթ Պետրոսյանը հայ պրոլետարական գրականության ավագ ներկայացուցիչներից մեկն է։ Գրական ասպարեզ է մտել անցյալ դարի 90-ական թվականներին։ Խորապես վերապրելով աշխատավոր գյուղացիության, քաղաքային աշխատավորական խավերի և բանվոր դասակարգի անհնախանձելի վիճակը, հենց սկզբից դրսևորել է իրեն որպես նրանց շահերի ջերմ պաշտպան։

1905 թ. ռևոլուցիային հաջորդող ռեակցիայի տարիներից հետո, բոլշևիկների պարտիայի շնորհիվ ստեղծված ռևոլուցիոն նոր վերելքի ազդեցությամբ Պետրոսյանը որպես բանվոր և որպես գրող իր ստեղծագործություններում հանգում է ցարական-կապիտալիստական կարգերը տապալելու և բանվոր դասակարգի դիկտատուրայի հաստատման գաղափարին։ Պետրոսյանը Արազու հետ միասին հիմք է դնում հայ պրոլետարական արձակին։ Նրանք, ինչպես և հայ առաջին պրոլետդրամատուրգ Ան. Վարդանյանը, բանվոր դասակարգի կյանքին ու պայքարին նվիրված իրենց գործերով՝ Հակ. Հակոբյանի գլխավորությամբ՝ զարգացնում են հայ պրոլետարական գրականությունը և դրանով իսկ ուժեղ հարված հասցնում հայ նացիոնալիստ գրողներին։ Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայից հետո Պետրոսյանը հայ առաջին արձակագիրներից մեկն էր, որ լծվում է ստեղծագործական նոր աշխատանքի և իր պատմվածքներում ու վիպակներում պատկերում է գյուղի և քաղաքի սոցիալիստական շինարարությունը ու սոցիալիզմի հաղթանակի համար պայքարող մարդկանց անձնուրաց աշխատանքը։

Մադաթ Պետրոսյանը ծնվել է 1867 թ. մայիսին, Իջևանի շրջանի Կոթի գյուղում, «պետական խարջի, բեգարի, կոռի տակ ճնշված» գյուղացու ընտանիքում,— ինչպես գրում է նա իր ինքնակենսագրության մեջ։ Գրաճանաչությունը սովորել է գյուղում։ Ուսում ստանալու մեծ ցանկությամբ՝ հակառակ աղքատությունից «աչք չբացող» հոր կամքի, 1879 թ. գաղտնի փախչում է Թիֆլիս և դժվարությամբ ընդունվում «արհեստավորաց» դպրոց, որն ավարտում է 1886 թ.։ Տնտեսական վատ պայմանների պատճառով Պետրոսյանը չի կարողանում ստանալ տեխնիկական բարձրագույն կրթություն։ Ստիպված մտնում է աշխատանքի Ավջալայի ջրմուղում։ Երեսուն երկու տարի ջրմուղում որպես կաթսավար աշխատելուց հետո՝ 1918 թ. փետրվարին մենշևիկյան ավանտյուրայի հետևանքով մի շարք հայ բանվորների հետ միասին հեռացվում է ջրմուղից իբրև կասկածելի անձնավորություն։ Որոշ ժամանակ անց, որպես սևագործ բանվոր աշխատում է մի կինոշենքի վրա։ Շենքի կառուցումն ավարտվելուց հետո դառնում է կինոյի վարիչ և վարում է այդ պաշտոնը մինչև 1928 թվը։

1937 թ. Վրաստանի կառավարությունը գնահատելով Մ. Պետրոսյանի բազմամյա աշխատանքը գյուտարարության և գրականության ասպարեզում, նրան շնորհում է Աշխատանքի Հերոսի կոչում։

Մ. Պետրոսյանը գրել սկսել է 1896 թվից։ Այդ և հետագա տարիներին «Մուրճ»-ում լույս են տեսնում սրա «Կոթի գյուղ» ընդհանուր վերնագրով լայնածավալ օշերկները։ 1903 թ. նույն «Մուրճ»-ում լույս է տեսնում «Մի կտոր հացի համար» պատմվածքը, որն արժանանում է լայն ընդունելության։ Ոգեվորվելով առաջին պատմվածքի հաջողությունից գրում է «Երկաթուղու բուտկաչու կյանքից» մի պատմվածք ևս՝ «Լուսի» վերնագրով, որը թարգմանվում և տպագրվում է „Новое обозрение" օրաթերթում։ Այդ երկու պատմվածքներով Մ. Պետրոսյանը ճանաչվում է որպես գրող։

1906 թ. լույս է տեսնում Մ. Պետրոսյանի պատմվածքների առաջին ժողովածուն, որը պարունակում է 10 պատմվածք՝ «Մի կտոր հացի համար», «Լուսի», «Կապույտ շապիկ», «Պահակը» և այլն։ Վերջին երկուսը թարգմանվում են վրացերեն ու լույս տեսնում առանձին գրքույկով։ Երկրորդ ժողովածուն լույս է տեսնում 1911 թ. և պարունակում է 10 նոր պատմվածք՝ «Մեքենավարի հիշատակարանից», «Բանտում», «Հաղթած մահը» և այլն։ Այս ժողովածուն ցարական կառավարությունը այրում է, իսկ հեղինակին առնում խիստ հսկողության տակ։

Մ. Պետրոսյանի ստեղծագործական բեղմնավոր աշխատանքն սկսվում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո։ 1925 թ. լույս է տեսնում նրա պատմվածքների երրորդ ժողովածուն՝ «Նոր դարբնոց» վերնագրով։ Այնուհետև լույս են տեսնում պատմվածքների չորրորդ (1926), հինգերորդ (1930), վեցերորդ (1931) ժողովածուները, «Վերելքի ճամբին», «Մեր հաղթանակը» (1931), «Մանկություն» (1935), վիպակները, «Միշտ պատրաստ», «Պիոները հնգամյակում» մանկական պատմվածքները և այլն։ Մ. Պետրոսյանը գրել է երեսունից ավել մանկական պատմվածքներ, որոնք 1923—1932 թ. թ. տպագրվել են «Կարմիր ծիլեր»-ում։ Նրա մի շարք պատմվածքներ՝ «Մեքենավարի հիշատակարանից», «Պահակը», «Կապույտ շապիկը», «Իմ վրացուհի ընկերուհիները», «Փոքրիկ մեքենավարը» և այլն տպագրվել են դպրոցական դասագրքերում։

Պետրոսյանը մեռել է 1944 թ. Թբիլիսիում։

I

Մ. Պետրոսյանի գրական գործունեությունը բաժանվում է երեք շրջանի։ Առաջինն սկսվում է 1896 թ. և շարունակվում է մինչև 1910 թվը, երկրորդը՝ 1911 թ. և շարունակվում է մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան և երրորդ՝ հետհոկտեմբերյան շրջան, որն սկսվում է 1921 թ. և շարունակվում է մինչև հեղինակի մահը։

Նախ տեսնենք առաջին երկու շրջանները։

Մ. Պետրոսյանի գրական ասպարեզ իջնելու տարիները (90-ական թվականներ) կապիտալիզմի զարգացման՝ արդյունաբերության վերելքի և արդյունաբերական պրոլետարիատի համախմբվածության տարիներն էին, պրոլետարիատ, որն «իր մարտական ռևոլյուցիոն հատկություններով արմատապես տարբերվում էր ճորատատիրական շրջանի ֆաբրիկանների բանվորներից և

մանր, տնայնագործական ու ամեն տեսակ այլ արդյունաբերության բանվոր-ներից»։[1] Կապիտալիզմի զարգացումը տեղի էր ունենում նաև գյուղում։ «Գյուղում ամենաունևոր գյուղացիներից առանձնանում էր կուլակային վեր-նախավը, գյուղական բուրժուազիան, իսկ, մյուս կողմից, շատ գյուղացիներ քայքայվում էին, ավելանում էր գյուղացիական չքավորության, գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների թիվը»։[2]

Հասարակական, սոցիալական այդ տեղաշարժերը համեմատաբար դան-դաղ, բայց տեղի էր ունենում նաև Անդրկովկասում։

Անտանելի ծանր էր բանվոր դասակարգի և գյուղացիության դրությունը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում։ «Բանվորների և գյու-ղացիների գլխին կանգնած էր իսպրավնիկների, ուրյադնիկների, ժանդարմ-ների, ոստիկանների, ստրաժնիկների մի ամբողջ բանակ, որոնք պաշտպա-նում էին ցարին, կապիտալիստներին, կալվածատերերին՝ ընդդեմ աշխա-տավորների, ընդդեմ շահագործվողների։ Մինչև 1903 թիվը գոյություն ունեին մարմնական պատիժներ... բանվորներին ծեծում էին ոստիկանությունն ու կազակները, մանավանդ գործադուլների ժամանակ, երբ բանվորները դադա-րեցնում էին աշխատանքը, չդիմանալով ֆաբրիկանտների ճնշումներին։ Բան-վորները և գյուղացիները քաղաքական ոչ մի իրավունք չունեին ցարական Ռուսաստանում»։[3] Հարստանում էր գյուղացիական բուրժուազիան՝ «կեղեքե-լով չքավորությանը և միջակ գյուղացիությանը»։ Ցարական բյուրոկրատիան գյուղացիական բուրժուազիայի հետ միասին անսանձ կամայականություննե-րով տնօրինում էր գյուղում։ Ավելանում էր գյուղացիական չքավորության թիվը։

Հասարակական, սոցիալական այս տեղաշարժերին ականատես էր բան-վոր արձակագիր Մ. Պետրոսյանը և որպես բանվոր խորապես զգում էր ցարական-կապիտալիստական կարգերի դաժանությունները։ Ճիշտ է, նա գաղափարական անհրաժեշտ խորությամբ չի կարողանում բացահայտել այդ ժամանակաշրջանի դասակարգային հակասությունները, բայց գրական աս-պարեզ իջնելու հենց առաջին օրից հանդես է գալիս նախ աշխատավոր գյուղացիության ու ապա բանվոր դասակարգի շահերի արտահայտիչ ու պաշտպան։

«Մուրճ»-ի 1896, 1897 և 1898 թվականների համարներում տպագրված «Կոթի գյուղ» ընդհանուր վերնագիրը կրող օչերկներում մանրամասն նկարա-գրելով Ղազախի գավառի գյուղացիների ստրկական վիճակը, նրանց ուսերին ծանրացած «փարչի ու բեգարի» անասելի չափերը, քյոխվի, «սուդյայի», փոշ-խառուների, պրիստավների և բազմաթիվ այլ կեղեքիչների անսանձ կամայա-կանությունները՝ դրսևորում է իրեն որպես աշխատավոր գյուղացիության իրավունքների պաշտպան և ցարական կառավարության թշնամի։ Այդ օչերկ-ներն իրենց մերկացնող ուժով և սրությամբ ժամանակին մեծ գնահատակա-նի են արժանանում։ Հետագա տարիներին ավելի է խորանում Պետրոսյանի գաղափարական զարգացումը։ Նրա ուշադրությունը գրավում են կապիտա-լիստական քաղաքն ու գործարանը, բանվորների՝ նոր մարդկանց աշխար-հը, նրանց վիճակն ու կարիքը։

---

[1] «ՀամԿ(բ) Պարտիայի պատմություն. Համառոտ դասընթաց», էջ 8։

[2] Նույն տեղում, էջ 9։

[3] Նույն տեղում, էջ 6—7։

1903 թ. լույս է տեսնում նրա «Մի կտոր հացի համար» պատմվածքը։ Պատմվածքի հերոս մեքենավար Դավիթը մի կտոր հացից չզրկվելու և ընտանիքը սովի չմատնելու պատճառով, չնայած աննպաստ եղանակին, համաձայնվում է վարել շոգեքարշը և մեռնում է ոչ անակնկալ պատահարից։ Պետրոսյանը ցույց է տալիս պատահարից մի քանի վայրկյան առաջ Դավթի մեջ կատարվող ներքին պայքարը՝ կամ զոհել հազարավոր ուղևորների և ազատվել մահից և կամ իր մահով փրկել նրանց։ Մեքենավար Դավիթը գիտակցաբար ընտրում է վերջինը։ Մեքենավարի կինը կորցնելով ամուսնուն՝ իր միակ նեցուկը այդ դաժան աշխարհում՝ խելագարվում է և երեխայի ձեռքից բռնած ընկնում է շոգեքարշի տակ։ Ռեալիստական այս պատմվածքում պատճառաբանված են ինչպես Դավթի ու նրա կնոջ վարքագիծը, այնպես էլ պատմվածքի գրեթե բոլոր մանրամասները։ Դավթի մահով հեղինակն ընդգծում է՝ առաջին՝ բանվոր Դավթի անձնազոհությունը և խոր հումանիզմը (որ դաստիարակել էր նրա մեջ իր հարազատ բանվորական աշխարհը), հակադրելով այն կապիտալիստների գիշատիչ իրականությանը, երկրորդ՝ մի կտոր հացի համար ընտանիքով կապիտալիստներին վաճառված, ամեն վայրկյան մահվան ենթակա հազարավոր Դավիթների աննախանձելի կյանքն ու իրավազուրկ վիճակը, և վերջապես՝ բողոքում է կապիտալիստական դաժան ռեժիմի դեմ՝ պաշտպանելով բանվոր դասակարգի շահերն ու իրավունքները։

Այս պատմվածքն իր իդեական բովանդակությամբ և քաղաքական սրաջակի եզրակացությամբ առնչվում էր 1903 թվի ռևոլյուցիոն վերելքին և մասսայական գործադուլներին, որ տեղի էին ունենում նաև Անդրկովկասում (Բաքու, Թիֆլիս, Բաթում)։ Այդ պատճառով այն անմիջապես գրավում է բանվորի «ուշադրությունը իր նոր ձևի արտահայտությամբ և նոր խոսքի բովանդակությամբ»[1] Եվ պատահական չէ, որ նույն՝ 1903 թ. պատմվածքը թարգմանվում է ռուսերեն, հրատարակվում առանձին գրքով և լայն տարածվում Անդրկովկասի և Ռուսաստանի բանվորության մեջ։

Բանվորի կերպարի նման մեկնաբանությունը նորություն էր մեր արձակագրության մեջ։ Նշանակալից է այն փաստը, որ բանվոր արձակագրի շնորհիվ առաջին անգամ հայ գրականության մեջ գնացքի մեքենավարը դարձավ ընթերցողի ուշադրության առարկա։ «Ես չեմ կարողանում մինչև օրս էլ մոռանալ, շարունակում է Հակոբյանը, այն սրտաշարժ ազդեսի նկարագիրը այնքան ճշգրիտ, այնքան անկեղծ և այնքան մոտ մեր սրտին։ Այդ օրից Մ. Պետրոսյանը դարձավ իմ գրչակից ընկերը և ես նույնքան հաճույքով էի կարդում հետզհետե տպագրվող նրա պատմվածքները»[2] Պետրոսյանի նմանօրինակ մուտքը գրականության մեջ ուրախացնում էր Հ. Հակոբյանին նախ այն պատճառով, որ Հակոբյանը նրա մեջ տեսնում էր բանվոր դասակարգի կյանքը պատկերող մի արձակագրի, որն իր պատմվածքներով նպաստելու էր նրա կազմակերպվածությանն ու ռևոլյուցիոն ոգու բարձրացմանը և ապա զարգանում էր պրոլետարական գրականությունը հայ իրականության մեջ, որով և նոր հարված հասցվում նացիոնալիստ գրողներին, որոնց համար բանվորական երգը խորթ և օտար հնչյուն էր։ «Սրանք, — գրում է Հակոբյանը Մ. Պետրոսյանի և Ան. Վարդանյանի մասին, — գալ էին տալիս մեր գրական

[1] Հ. Հակոբյան, «Անցյալի հուշերից», «Գրական թերթ», 1930 թ. № 4։
[2] Հ. Հակոբյան, նույն տեղում, № 4։

հակառակորդներին, հանձին նացիոնալիստ գրողների, թե բանվորական կյանքի գրականությունը ոտքի է կանգնում, քայլում է և արդեն ունի իր ներկայացուցիչները ոչ միայն պոեզիայի, այլև վիպագրության և դրամատուրգիայի բնագավառում»։[1]

Պետրոսյանը իր ստեղծագործության նյութ դարձնելով բանվորական աշխարհը, շարունակում է վեր հանել քաղաքի աշխատավորական խավերի և բանվորական կյանքի տխուր պատկերները։ Բայց «Մի կտոր հացի համար»-ից հետո գրած «Լուսի», «Շուշան», «Պահակը», «Բանվոր» և մի շարք այլ պատմվածքներում նրանց շահերի պաշտպանության գիրքերից չիջնելով հանդերձ, չի պատճառաբանում իր մի քանի հերոսների վարքագիծը, չկարողանալով բարձրանալ քաղաքի աշխատավորական խավերի և դեռևս դասակարգային հստակ գիտակցության չեկած որոշ բանվորների մտածողության ու մտորումների մակարդակից։ «Շուշան» պատմվածքում ճիշտ պատկերելով Շուշանի հոգեկան տանջանքները, այնուամենայնիվ չի կարողանում պատճառաբանել Շուշանի նկատմամբ աղայի և նրա աղջիկների ցուցաբերած հոգատարությունը։ Հեղինակը նրանց գուրս է բերել աղքատներին օգնող ու սիրող հրեշտակներ, չնայած Շուշանը բազմիցս հիշեցնում է իր և նրանց միջև եղած մեծ տարբերությունը։ Հնարավոր է, որ մի աղա վաճառական «մարդկային» վերաբերմունք ցուցաբերեր մի խեղճ կոշկակարի և նրա ընտանիքի նկատմամբ, բայց այդ տիպական չէ և տվյալ դեպքում չի բացահայտում բուրժուական շահագիտական իրականության ամբողջ այլանդակությունը։ Անհավանական է ու ոչ պատճառաբանված նաև կալվածատիրոջ ծառայի պաղանային վերաբերմունքը տաս տարեկան երեխայի նկատմամբ՝ «Լուսի» պատմվածքում։ Ծառայի սոցիալական դրությունը նրա մեջ պետք է առաջացներ սեր ու հոգատարություն իր բախտակից աղքատ Լուսիի նկատմամբ, մինչդեռ Պետրոսյանը ցույց է տալիս ճիշտ հակառակը։ «Պահակը» պատմվածքում ցարիզմի և կրոնի կործանարար էությունը բացահայտելով հանդերձ, չի պատճառաբանում բանվոր պահակի հոգեկան ծանր ապրումները, խելագարությունը և այլն։ Այս կարգի անհավանականությունները բացատրվում են անլուր տառապանքներից դուրս գալու ուղիների մասին հեղինակի ունեցած դեռևս ոչ պարզորոշ պատկերացումով։ Սրանով է բացատրվում նաև բանվորական կյանքից գրած «Բանվոր», «Մեքենավարի հիշատակարանից» և մի քանի այլ պատմվածքների թերությունները։ «Բանվոր» պատմվածքի բանվորը կապիտալիստների դաժան հարստահարումից, անբարոյական վաճառականի ստոր արարքներից սթափված, չնայած խոսում է աշխարհի անարդարության և իր ընդունակությունների համեմատ իրեն չվարձատրելու մասին, բայց չարիքից ազատվելու համար վճռական միջոցների չի դիմում։ Դասակարգային որոշակի գիտակցության եկած չլինելու պատճառով տեղի է տալիս գայլ աշխարհի առաջ և աչքերից «հեղեղի պես արցունք թափելով» ինքնասպանություն է գործում։ «Մեքենավարի հիշատակարանից» պատմվածքում բանվորը դեռևս իրեն համարում է մեքենայի հազարավոր մասնիկներից մեկը, նրա գերին։ «Ու ես, փոքրիկ մրջյունս, աշխատում եմ քեզ հետ զուգընթաց, իբրև հազարավոր մասնիկներիցդ մեկը, հնազանդ ու ստրուկ», — ասում է նա։ Մեքենան իշխում է նրա խոհերի և զգացմունքների վրա։ Մեքենան ներկայանում

[1] Հ. Հակոբյան, «Անցյալի հուշերից», «Գրական արշավ», 1930 թ., № 4։

[illegible] որպես գրեչ և անզոր ու վհատված բանվորը «յուղում է նրա հրեշավոր շոբունքները», իմանալով հանդերձ, որ այն պետք է ջախջախի իրեն։ Այստեղ նա իր զայրույթը թափում է մեքենայի վրա, ցանկանում է փշրել այն, իսկ նրա հետ նաև իրեն։ «Թող խորտակվի նա,— բացագանչում է անզոր բանվորը,— ու նրա այլանդակ կույտի հետ խառնվեն իմ վաստակած ոսկորները»։ Շիշտ է, բանվորը մեքենան փշրելու միջոցով և իր մահով բողոքում է շահագործող դասակարգի դեմ, բայց այդ բողոքը անզոր է ու պասսիվ։ Այս պատմվածքը գրվել է 1907 թ. և ակնհայտնի կերպով կրում է ռեակցիայի տարիների ազդեցությունը։

Այս և նախորդ պատմվածքների ընդհանուր թերությունն այն է, որ նրանց մեջ չի երևում «մարտական պրոլետարիատի դասակարգային պայքարի թափը» (Հակոբյան), նրա հզոր ուժը։ Այսուհանդերձ անժխտելի է այդ պատմվածքների նշանակությունը բանվոր դասակարգի իրական վիճակի, նրա ու կապիտալիստների դասակարգի միջև եղած հակասության բացահայտման և հեղինակի քաղաքական հասունացման համար։ Մնում էր մի քայլ միայն, որ բանվոր արձակագիրը պասսիվ բողոքից անցներ ակտիվ բողոքի, դասակարգային միասնական, կազմակերպված կռվի անհրաժեշտության գիտակցմանն ու պրոպագանդային, մեքենայի և տիրող կարգերի առաջ տեղի ունեցող բանվորից՝ կազմակերպված և ռարական ու կապիտալիստական կարգերի վրա վերջնական դրոհի պատրաստվող բանվորներին։ Պետրոսյանը շատով կատարեց այդ քայլը՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ սկսված բանվոր դասակարգի նոր ռևոլյուցիոն վերելքի շնորհիվ։

1905 թ. ռևոլյուցիայի պարտությունից հետո, ստոլիպինյան ռեակցիայի ուժեղացման պատճառով պարտիան անցնում է ընդհատակի։ Պարտիան փոխելով բացահայտ պայքարի իր տակտիկան, գաղտնի կազմակերպում է բանվոր դասակարգին՝ դալիք վճռական ճակատամարտի համար։ Աստիճանաբար «սկսեց անհետանալ բանվորների հոդնածությունը, որ ռևոլյուցիայի պարտության առաջին տարիներն էին բերել։ Բանվորները նորից սկսեցին պայքարի ելնել։ Բոլշևիկների նախաձեռնությամբ նոր ռևոլյուցիոն վերելքի անխուսափելիության մասին, հիշա գալիս եկավ։ Արդեն 1911 թվականին գործադուլավորների թիվը անցնում էր 100 հազարից»[1]։ Այդ ոչ միայն տեսնում էր Պետրոսյանը, այլև անձամբ մասնակցում և ձգտում էր գիպարմեստական խոսքով բարձրացնել իր ընկեր բանվորների ռևոլյուցիոն ոգին։ Ինչպես է, նա ուրախանում էր յուրաքանչյուր մասնակցական գործադուլների տեսարաններ, չկարողացավ գիպարմեստական լայն կտավով բացահայտել պատմական այս տեղաշարժերը, բայց և այնպես իր համեստ չափով պաշտպանեց ռևոլյուցիայի գաղափարները և հավատ ներշնչեց ընկերներին վերջնական հաղթանակի նկատմամբ։ Եվ իրոք, տեսնում ենք, որ 1910, 1911 և հետագա տարիներին գրած նրա պատմվածքներում այլևս չի երևում հոգնած, ցարական կապիտալիստական կարգերի առաջ տեղի ունեցող բանվորը։ Նրա պատմվածքներում արդեն հանդես են գալիս «ապատության կրակը» իրենց «հոգու ամենանվիրական խորքում պահած», «պարելի նոր տարիությունը» կործանելու պատրաստ և ապատության համար մահն արհամարհող բնավորություններ («Հայկիկ մահը»),

[1] «Համկ(բ) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց», էջ 200։

հարուստների «շքեղությունը փշրելու» ելած աղքատ վրիժառուներ («Երկու եղբայր»), «միության վիթխարի ուժով նեխված կյանքը» և «փտած օրենքները» քար ու քանդ անող ռևոլուցիոներներ («Բանտում») և այլն։

«Բանտում» պատմվածքը գրվել է 1911 թ.։ Լիրիկական ջերմ շնչով գրված այդ պատմվածքում պատկերվում է մի մեծ գործարանի բանվորների գործադուլի հետևանքով հինգ երիտասարդ ռևոլուցիոներների բանտարկությունը, բանտը, «ամրակուռ շղթաներից» չընկճվող մյուս բոլշևիկների ցասումնալից դեմքերը և այլն։ Այստեղ այլևս չի լսվում բողոք «աշխատանքի դիմաց» լրիվ չվարձատրվելու մասին. «բանվորներս գործադուլ էինք հայտարարել, կոպեկները չէր մեր նպատակը և ոչ էլ ժամերի թիվը», ասում է բանտարկված բանվոր ռևոլուցիոները, այլ ցարիզմի և կապիտալիզմի տապալումը, աշխատավոր ժողովրդի ազատագրումը։ Այս համաժողովրդական կռիվը միացրել է իրար բոլոր ազգությունների բանվորներին (Սարոկին, Մալինին, Մարքս, Շտախբերգ և այլն), որոնք հարգում և պաշտպանում են իրար։ Պետրոսյանը ցույց է տալիս, որ նրանք ռևոլուցիայի շահերից բացի ուրիշ շահ չունեն, ապրում և շնչում են միայն նրանով։ Պետրոսյանը իր հերոսներին օժտել է ռևոլուցիոներներին բնորոշ գծերով՝ տոկունությամբ, մինչև վերջը կռվելու կամքով, անձնազոհությամբ և այլն։ Անսահման ուրախանում է բանտարկված ռևոլուցիոները, երբ իմանում է, որ իր ընկերներն ազատ են. «Ընկերներս ազատ են և դա բավական է»։ Պատմվածքի մյուս դրական կողմն այն է, որ թե բոլոր բանտարկյալները և թե հատկապես մահվան դատապարտված երիտասարդները գիտեն թե ինչպես ու ինչի համար են կռվել և, որ ամենակարևորն է, հավատում են իրենց գործի վերջնական հաղթանակին՝ «այն փայլուն արշալույսին, որը վաղը պիտի ծագի»։ Այդ պատճառով նրանք գնդակահարությունից առաջ արհամարհում են իրենց «մեղքերը քավող» քահանային, մահը և ավանդ թողնում ընկերներին «վրեժխնդիր, վրեժխնդիր լինել» ու ամուր պահել «արյուն արցունքով ձեռք բերված» ռևոլուցիայի դրոշը։ Բանտարկվածները մահվան դատապարտված երիտասարդ ռևոլուցիոներներին ուղարկած գաղտնի նամակում գրում են՝ «ձեր արյան յուրաքանչյուր կաթիլը բոց կդառնա, կարմիր բոց և կլափե մեր սիրտը, եթե չգանք ձեր ետևից, նրանք կբանան հազարավոր կուրացած աչքեր և մի ահեղ ցասումով կփշրվեն դարավոր կուռ շղթաները»— ահա պատմվածքի իդեական բովանդակությունը։ Որ թերություններով հանդերձ (որոշ սխեմատիզմ, վերջավորված տիպերի կամ տիպի բացակայություն և այլն), այս պատմվածքը մի ըմբոստ մարտակոչ էր ռևոլուցիոն վերելքի նախօրյակին, բանվոր դասակարգի կուտակվող հզոր ուժի ու ցարական-կապիտալիստական դաժան ռեժիմը խորտակելու վճռականության արտահայտություն։ Եվ պատահական չէ, որ ցարական կառավարությունը 1911 թ. դադարեցնում է Մ. Պետրոսյանի պատմվածքների ժողովածուի տպագրությունը, որի մեջ զետեղված էր և «Բանտում» պատմվածքը։ Ցարական կառավարության ներքին գործերի մինիստրության մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեն Պետրոսյանի պատմվածքները տպագրող «Էպոխա» տպարանին գրում է՝ «Կոմիտեի գրասենյակը, պ. նախագահի հրամանով խնդրում է տպարանին կասեցնել հայերեն լեզվով գրքույկի հրատարակությունը՝ Մառաթ Պետրոսյանի «Պատմվածքներ» վերնագրով ժողովածուի 2-րդ գիրքը, մինչև հատուկ կարգադրություն ստանալը»։ Այս հրամանից

կարճ ժամանակ անց ցարական գրաքննությունը «հատուկ կարգադրությամբ» բռնագրավում և այրում է ժողովածուի տպագրված 2000 օրինակը, համարելով այն բանվորների միտքը «խռովող» պրոպագանդա, նրանց ապստամբեցնող և հակապետական գործ։

Հիշյալ պատմվածքով բոլորվում են բանվոր արձակագրի գրական գործունեության նախահոկտեմբերյան առաջին երկու շրջանները, որոնք, ինչպես տեսանք, աչքի են ընկնում թեմատիկայի նորությամբ և նոր խոսքով, դասակարգային գիտակցության հասնող բանվոր դասակարգի նախ պասսիվ, ապա իմբոստ բողոքով, ընդհատակում գործող ռևոլուցիոներների անհաշտ պայքարի մի քանի դրվագների նկարագրությամբ և վերջապես ռևոլուցիոն նոր ալիքի բարձրացման նախօրյակին բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի նկատմամբ հեղինակի ունեցած լավատեսության դրսևորումով։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից մինչև 1921 թիվը Պետրոսյանը գրում է մի քանի պատմվածքներ միայն, որոնք նոր բան չեն ավելացնում նրա մինչ այդ եղած ստեղծագործությունների վրա։

2

Սովետական կարգերի հաստատումից հետո 54-ամյա արձակագիրը լրծվում է գրական-ստեղծագործական նոր աշխատանքի, կրկնապատկված եռանդով աշխատում է օգտակար լինել իր երազած կարգերի ամրապնդման ու զարգացման գործին։ Նրա ստեղծագործության այս նոր էտապի հիմնական թեմատիկան է՝ առաջին՝ ցարական և կապիտալիստական տիրապետության դաժան ռեժիմի օրոր բանվոր դասակարգի կյանքի, ռևոլուցիոն պայքարի ու բոլշևիկյան պատերազմի մի քանի դրվագների վերհուշը. երկրորդ՝ սոցիալիստական շինարարության և աշխատանքի գովերգը, երրորդ՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, չորրորդ՝ նոր ընտանիքի պրոբլեմը՝ ինդուստրիալ-գործարանային ստեղծագործ աշխատանքի ֆոնի վրա և հինգերորդ՝ ցարիզմից ժառանգություն ստացած հետամնաց գյուղի կուլտուրական զարթոնքը, աճող նոր սերնդի՝ կոմսոմոլի և պիոներիայի աշխատանքը սոցիալիզմի առաջին հնգամյակում։ Նախ տեսնենք առաջինը։

1) Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի հետևանքով կյանքում կատարված արմատական փոփոխությունները, աշխարհում առաջին անգամ երկրի տերը դարձած բանվոր դասակարգի և աշխատավորության ստեղծագործական խանդավառությունը Պետրոսյանի մեջ առաջացնում են անցյալ ծանր կյանքի և ցարիզմի ու կապիտալիզմի դեմ բանվոր դասակարգի մղած հերոսական պայքարի վերհուշ, կապված բոլշևիկյան պատերազմի մի քանի դրվագների պատկերման հետ։ Անցյալի վերհուշը, սակայն, Պետրոսյանի մոտ ինքնանպատակ չէ։ Որ մի շարք պատմվածքներում («Հունվարի 9-ը», «Բանվորուհի Անուշկա», «Ես բոլշևիկ եմ», «Գապոնի ծրարը» և այլն) և մի քանի վիպակներում («Մեր հայրենակը», «Մանկություն») անցյալի ու ներկայի հակադրությամբ, ինչպես նաև լուսապայծառ ներկան ձեռք բերելու հերոսամարտերի նկարագրությամբ Պետրոսյանը ձգտում է վեր հանել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի պատմական նշանակությունը։ Առաջին անգամ կյանքում, առանց վախի, առանց բռնանալու իր համոզմունքների ու պայմանների վրա, նա համարձակորեն պատկերում է անցյալի

դաժան ու ապականված իրականությունը՝ ընթերցողի մեջ նրա նկատմամբ հակակրանք ու ատելություն, իսկ ներկայի նկատմամբ սեր ու նվիրվածություն դաստիարակելու որոշակի դիտավորությամբ։ Ամբողջ էությամբ բանվոր դասակարգին նվիրված Պետրոսյանը սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից իր պատմվածքներով սովետական հայրենասիրության սլրոպագանդա էր անում։ Նա այդ անում էր առայժմ անցյալի և ներկայի հակադրությամբ, «Մեր հաղթանակը» վիպակի հերոսներ Զիզիի և Արծվի կյանքի ու իր անշող մանկության նկարագրությամբ՝ «Մանկություն» վիպակում։

«Մեր հաղթանակը» վիպակի հերոս Զիզին մորը կորցնելուց հետո խորապես զգում է իրականության ողջ ահավորությունը։ Քաղցի սպառնալիքը նրան մղում է դուրս և 17-ամյա աղջիկը առաջին անգամ փորձում է սեփական աշխատանքով հաց վաստակել։ Սակայն մեղկ ու ապականված իրականությունը չի ժպտում աղքատին։ Բոլորը՝ սկսած ամենացածր պաշտոնյայից, վերջացրած բուրժուական աշխարհի պրոֆեսորով (երաժշտության) նայում են նրան «իբրև հեշտանքի, զվարճության առարկայի» և խոստանում են հաց կամ աշխատանք տալ իր մարմինը վաճառելու պայմանով։ Հոգեկան ու ֆիզիկական անկումից նրան փրկում է բանվոր ռևոլուցիոներ Արծիվը և ընդհատակյա ռևոլուցիոն աշխատանքը, որին նվիրվում է Զիզին ու ակտիվ գործում մինչև ցարական դաժան կարգերի տապալումը։ Պարզ լեզվով ու ջերմ լիրիզմով գրված այս վիպակում Մ. Պետրոսյանը տալիս է Զիզիի բարդ և մեծ մասամբ համոզիչ ապրումների նկարագիրը, նրա վիշտը, ըմբոստությունը և աղատ կյանքի նկատմամբ ունեցած երազանքը։ Անարգանքի սյունին է գամում բանվոր դասակարգի և միլիոնավոր աշխատավորների ուսերին ծանրացած «երկաթե բռունցքը» ցարական և կապիտալիստական ատելի ռեժիմը։ Զիզիի նկատմամբ բուրժուական պրոֆեսորի և նրա տղայի ցուցաբերած վերաբերմունքով, ինչպես նաև հասարակաց տան նկարագրությամբ (որի մշտական հաճախորդները քաղաքապետները, բարձրաստիճան չինովնիկներն ու հարուստներն էին) բացահայտում է կործանվող դասակարգի բարքերի ապականվածությունը։ Հանձին Զիզիի, վառ ձգտումներով, իր քրտինքով ապրող և բարձր բարոյականությամբ օժտված հասարակ մարդկանց հակադրում է բուրժուական աշխարհի ապականված վերնախավին՝ զզվանք և ատելություն առաջացնելով վերջինիս նկատմամբ։ Բանվոր Արծվի կյանքի պատմությամբ, նրա վարքագծով և հատկապես Զիզիի նկատմամբ ցուցաբերած հոգատարությամբ ընդգծում է բանվոր ժողովրդի հարուստ հուզաշխարհն ու իսկական հումանիզմը։ Արծվի և ընդհանրապես ռևոլուցիոն խմբակի գործունեությամբ, ինչպես նաև մայիսյան ցույցի, Զիզիի ու բանտարկված մյուս ռևոլուցիոներների բանտային կյանքի էպիզոդիկ նկարագրությամբ վեր է հանում ցարական և կապիտալիստական կարգերի դեմ մղված դժվար, բայց տևական ու համառ պայքարի հերոսական բնույթը։ Այս պատմվածքում նրա հերոսները կռվում են ոչ թե տնտեսական որոշ զիջումների, այլ «պրոլետարիատի դիկտատուրայի» համար։

Բարձր գաղափարականությամբ գրված այս պատմվածքը զերծ չէ նաև որոշ թերություններից՝ գեղարվեստական կատարման իմաստով։ Մ. Պետրոսյանը վիպակում հերոսների և հատկապես ցարիզմի տապալման մասին ա-

վելի շատ պատմում է, քան ցույց տալիս գործողության մեջ։ Ցարական կարգերի տապալման մասին իմանում ենք Զիզիին և մյուս բանտարկյալներին բանտից ազատելու կապակցությամբ միայն։ Ինչքան համոզիչ ու ռեալ է Զիզիի մինչ ռևոլուցիոն կյանքի նկարագիրը, նույնքան անհամոզիչ ու էպիզոդիկ է նրա ռևոլուցիոն գործունեությունը և հատկապես հանկարծական վերափոխումը։ Դասակարգերի և դասակարգային պայքարի մասին բացարձակապես ոչ մի գաղափար չունեցող, հասարակաց ու այլասերված պրոֆեսորի տնից փախած և ապա փողոցային երգչուհի դարձած Զիզին մի արիստոկրատ կնոջ արհամարհանքից հետո՝ կողքին կանգնած բանվորին նայելով գալիս է դասակարգային գիտակցության ու հանկարծ խոսում դասակարգային «խուլ» պայքարի մասին։ «Հայացքս ընկավ բանվորին, մի խուլ դասակարգային պայքար համակեց մեզ երկուսիս»։ Գեղարվեստորեն չի պատճառաբանված Զիզիի բանտարկությունը և վիրավոր Արծվին երկար ժամանակ ծպտյալ խնամելը։ Վիրավորը իր սիրածին չի ճանաչում, որովհետև, ինչպես ձգտում է համոզել հեղինակը, նա կրում է սև ակնոցներ և ներկայանում է որպես բժշկական քույր։

Ցարական կարգերի դեմ ուղղված բացահայտ բողոքով հանդերձ («Մանկություն» վիպակում) Պետրոսյանը իր մանկությունը և գյուղական կյանքը ներկայացնում է հովվերգական երանգով։ Վիպակի առաջին մասում չի երևում, որ վիպակի հերոսի՝ Մադնաց գյուղը ցարական կառավարության կրունկի տակ հեծող խավար ու աղքատ գյուղն է։ Զափազանց բարի է նաև «անծանոթ վաճառականը»։ Նա ոչ միայն չի ճանկում այս նոր «Տիքորին», այլև բարի խրատներից ու նրա ապագայի մասին արած դատողություններից հետո ընդունել է տալիս արհեստագործական դպրոց, որ տիպական չէ «բազազ Զիմզիմովների» և նրանց ժամանակաշրջանի համար։ Վեպի հերոս Մադնի մեջ կոլեկտիվիստական գիտակցություն և ցարական կարգերի նկատմամբ ատելություն դաստիարակող ռևոլուցիոներ Խեչոն չի տրվում գործողության մեջ. նրա մասին միայն պատմվում է։

Վերոհիշյալ մի քանի թերությունները չեն արժեքազրկում «Մեր հաղթանակը» և «Մանկություն» վիպակների իդեական-դաստիարակչական արժեքը։ Դրանցով հեղինակը նոր սերնդի մեջ դաստիարակում է սովետական վառ հայրենասիրություն և աշխատանքային պայքարի կոչ անում «հանուն արթնացած չքնաղ երկրի»։ «Ա՛հ, ինչպես եմ նախանձում կայտառ մանուկներին, ասում է «Մանկության» հերոս—հեղինակը, որ մեր վերելքի այս հոյակապ շամբին առաջին շարքերում մարտնչողների բախտը նրանց է վիճակված... կուզեի նորից ապրել, նորից հուզվել... կուզեի մեր այս պայքարի օվկիանում, խավարը ճեղքեի ու սովետական լուսաբացի շողերով զարդարեի մեր արթնացած չքնաղ երկիրը»։

Մ. Պետրոսյանը եթե հիշյալ վիպակներում շեշտը դնում է ցարիզմի օրոք աշխատավորության ստրկական վիճակի վրա, կապված բանվոր ժողովրդի ընդհատակյա և բացահայտ ռևոլուցիոն պայքարի հետ, ապա «Հունվարի 9»-ը, «Գաղտնի ծրարը» և այլ պատմվածքներում շեշտը դնում է գերազանցապես ցարիզմի դեմ բանվոր դասակարգի մղած պայքարի և նրա նկատմամբ տարած վերջնական հաղթանակի վրա։ «Գաղտնի ծրար» պատմվածքում, որ նվիրված է Վրաստանի սովետականացման 10-րդ տարեդարձին, պատկերում է քաղաքացիական կռիվը և հատկապես Կարմիր Բանակի հաղ-

թական մուտքը Թբիլիսի, ինչպես նաև հաղթանակից հետո կազմակերպված շքերթը, Կարմիր Բանակի զորամասերի նկատմամբ Թբիլիսիի աշխատավորության ցուցաբերած անսահման հոգատարությունն ու խանդավառ ընդունելությունը։ Հեղինակը կենդանություն է հաղորդել պատմվածքին բանվոր բոլշևիկ Շալվա Մեբուկեի անձնուրաց և հերոսական գործունեությամբ, որը թշնամու ռազմական օղակը ճեղքելիս, չնայած ստացած մահացու վերքին, գերմարդկային ուժերի գործադրումով հասնում է Կարմիր Բանակի զորամասերին ու հրամանատարին հանձնում սեփական արյունով ներկված գաղտնի ծրարը։ Դրանից հետո Կարմիր Բանակի զորամասերն անցնում են վերջնական գրոհի և ազատագրում Թբիլիսին։ Ռեալ ու պատճառաբանված են Շալվայի կնոջ, ռազմական խորհրդի անդամ՝ Լյուդմիլայի անձնական վիշտն ու հասարակական խինդը իրար խառնված բարդ հոգեվիճակի նկարագիրը՝ քաղաքը գրավելուց հետո կազմակերպված միտինգի, հիվանդանոց գնալու և վիրավոր ամուսնուն տեսակցելու ժամանակ։

Քաղաքացիական պատերազմի վերոհիշյալ հերոսական դրվագի պատկերումով Պետրոսյանը կոչ է անում ամուր պահել հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի նվաճումները և միլիոնավոր հերոսների արյան գնով ձեռք բերված աշխատավոր ժողովրդի հայրենիքը։ Այս է պատմվածքի իդեական բովանդակությունն ու գեղարվեստական բարձր արժեքը։

Իր իդեական բովանդակությամբ «Գաղտնի ծրարին» սերտորեն առնչվում է «Հունվարի 9-ը» պատմվածքը։ Այստեղ Պետրոսյանը պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման ճանապարհին զոհված հերոսների հիշատակին պատշաճ հարգանք մատուցելու հետ միասին, իր երախտագիտության զգացմունքն է հայտնում ռուս մեծ ժողովրդին՝ մարդկության ազատարարին ու «փարոսին»։ Խորապես գիտակցելով ռուս մեծ ժողովրդի համաշխարհային պատմական դերը պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման գործում, ծերունի արձակագիրը գրում է. «Ու ես կանգնած էլբրուսի ձյունապատ գագաթին, արյան ու պայքարի մեջ ձուլված, հնոցի ու զնդանի մեջ մխված, համաշխարհային մեծ հաղթանակի դրոշը ձեռքիս ամբողջ կրծքով կաղաղակեմ. ողջույն քեզ, մեծ Ռուսաստանի աշխատավոր ժողովուրդ, ողջույն քեզ մարդկության լուսատու փարոս»։

2) Մ. Պետրոսյանը չի տարվում միայն անցյալի վերհուշով։ Նրան զբաղեցնում է նաև սովետական երկրի ամրապնդման, զարգացման և սոցիալիստական շինարարության գործը («Գործազուրկը», «Նոր դարբնոց», «Զագէսի բանվորը» և այլն)։ «Զագէսի բանվորը» ըստ էության արձակ բանաստեղծության մեջ տալիս է այս անգամ արդեն բնության դեմ կռիվ մղող նոր մարդկանց շինարար աշխատանքի պաթոսը, երկրի կառուցման և առաջընթացի գործում նրանց ցուցաբերած «երկաթե կամքն» ու անսահման եռանդը։ Զագէսի էլեկտրակայանի շինարար բանվոր Ակոբի միջոցով վեր է հանում «նոր կյանքը կառուցող» սովետական ստեղծագործ մարդկանց, որոնք «իբրև մի մեծ հսկա դարբնում են նոր ուղին, հարթում լայն ճանապարհը, կերտում մեծ շենքը, մեծ ջրամբարը շինարար աշխատանքի...»։ Նոր կյանքը ծնվում է և կծնվի շինարար, ստեղծագործ աշխատանքով— ահա պատմվածքի իդեան։ Այդօրինակ աշխատանքի գովերգը Պետրոսյանի պատմվածքների հիմնական թեմաներից մեկն է։ Բանվորին, դարբնին, քարտաշին և առհասարակ ֆիզիկական աշխատանքը նա բարձր է դասում ամեն ինչից, այդ պատճառով եր-

բեմն սխալ կերպով այն հակադրում է գրասենյակային մտավոր աշխատանքին, վերջինս համարելով տարտամ և հեղձուցիչ («Գործազուրկը»)։

Ինդուստրիայի զարգացումը, բազմաթիվ հիդրոկայանների կառուցումը արմատապես փոխում է նաև գյուղի դեմքը։ Սովետական մարդկանց միջոցով գյուղ մուտք գործած տեխնիկան դառնում է հին գյուղի կործանման և նոր գյուղի ստեղծման հիմնաքարը։ «Նոր գարբնոց» պատմվածքը պատկերում է դժվարությամբ, բայց տեղի տվող հին և զարգացման կենսունակություն ունեցող նորը։ Պատմվածքի «ծերացած և կորացած Օհանը» իր կիսաքանդ դարբնոցով ու «հին կարկատած փուքսով» մարմնավորում է հին գյուղը հետամնաց ու պրիմիտիվ տեխնիկայով, իսկ Մադին՝ մեխանիզացիայի ենթարկված իր դարբնոցով՝ «խորը քնից» արթնացող նոր, սովետական գյուղը։ Այդ երկուսի մեջ տեղի ունեցող կռիվը՝ հնի և նորի կռիվն է։ Մ. Պետրոսյանը կարողացել է հանձին Մադնի և Օհանի տալ մի կողմից ստեղծագործական եռանդով լցված և «հին քանդելու ու նրա տեղ նորը շինելու» նշանաբանով գործող սովետական մարդու, իսկ մյուս կողմից հնից, իր պապենական, մասնավոր դարբնոցից դժվարությամբ բաժանվող, բայց և նորին համակրող ու նորի ազդեցությամբ իր ապրած «խավար» կյանքի կործանարար լուծյունը միանգամից գիտակցող մարդուն, նրա ներաշխարհում կատարվող իրարամերժ զգացումների խուլ պայքարով։ Ծերունի Օհանի հոգեկան տանջանքներն ու ներքին պայքարը միանգամայն ռեալ է ու պատճառաբանված։ Համոզիչ ու բնորոշ է նաև կատարված արագ փոփոխությունների առթիվ իր հին մուրճով նոր դարբնոց մտած Օհանի զարմանքը։ «Խփում էր նոր սալին իր հին մուրճը ու մտածում... որքան արագ կատարվեց այս բոլորը... որքան արագ»։

3) Սովետական գյուղին վերաբերող մի այլ պատմվածքում («Ֆիլոքսերա») Մ. Պետրոսյանը տալիս է մի պատկեր գյուղի կոլեկտիվացումից։ Այս պատմվածքում պաշտպանում է բոլշևիկների պարտիայի և սովետական կառավարության գյուղատնտեսության կոլեկտիվացման, կուլակին որպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը և դրսևորում «սովետսկիների» նկատմամբ աշխատավոր գյուղացիության ցուցաբերած անհուն սերը։ Հիշելով իր դառն անցյալը, նախկին աղքատ գյուղացի Էստատեն զայրույթով պատմելով կուլակ Իվանեի վարքագծի մասին, ասում է՝ «Միտդ ա՞, որ արտասունքը աչքերիս, մազով միրուքով մարդուս բաղիցդ դուրս արիր, հալա մի լավ էլ վրաս բղավեցիր... բա ես չուտեմ էս սովետսկիների հոգին, բա ես մատուղ չլինեմ նրանց օր ու արևին»։ Հեղինակը ցույց է տալիս այնուհետև, որ դասակարգային թշնամին՝ կուլակը, հեշտությամբ չի զիջում իր դիրքերը։ Նրանք զայրույթով ու վրեժով են նայում կոլխոզին, զանազան վնասարարական պլաններ են գծում՝ հույս ունենալով, թե «էգուց էլի» իրենց «դովրանը» կլինի։ Աշխատում են կասկած առաջացնել կոլխոզնիկների մեջ գյուղի մեխանիզացիայի, գիտական հիմունքներով կազմակերպվող գյուղատնտեսության նկատմամբ և այլն։ Այս պատմվածքում Մ. Պետրոսյանը ընդհանուր գծերով կուլակների պլանների ձախողման ու կոլեկտիվացման հաղթանակը պատկերելու հետ միասին երգիծում է թշնամուն, հասցնելով այն քաղաքական երգիծանքի աստիճանի։ Գյուղատնտեսը, խոսելով այգիներում տարածված ֆիլոքսերա հիվանդության, ամերիկական վազերի և վերջիններիս վրա տեղական ընտիր վազերի մատեր պատվաստելու մասին, ասում է՝ «հա, ճիշտ

է ասում ընկերը. էդ ամերիկական վաղերի վրա պատվաստվում են տեղական ամենաընտիր վաղերի մատեր... էնպես որ դետնի տակը մնում է Ամերիկան, դետնի երեսին մենք»։

Պատմվածքի թերությունն այն է, որ հեղինակը չի կարողանում բուռն ատելություն առաջացնել դասակարգային թշնամի կուլակներ Իվանեի և մյուսների նկատմամբ։ Նրանց երբեմն դուրս է բերում այնպիսի անզոր արարածներ, որոնք կարծես չգիտեն, թե ինչպիսի դիրք բռնեն կատարվող տեղաշարժերի հանդեպ։ «Մենակ կուլակներն էին մթնել և չէին իմանում թե ինչ դիրք բռնեն»։ Չի տրվում կուլակների կատաղի դիմադրության և վնասարարական գործունեության փաստեր, այդ պատճառով նրանց դեմ մղված կռիվը չի ստանում պահանջված սրությունը։ Պետրոսյանի գյուղացին դեռևս նայիվ է և դասակարգային թշնամուն որոշ չափով ներող։ Այնուհետև չնայած բատրակ Դաթոյի բերնով ասում է, որ կուլակներին «պետք է դուրս քշենք. թե չէ մեր գլխին օյին կբերեն», այնուամենայնիվ չի կարողանում առաջ տանել սյուժեն և տալ կուլակին որպես դասակարգ վերացնելու թեկուզ մի փաստ։ Պատմվածքն առհասարակ սխեմատիկ է։ Առաջ քաշված այս կամ այն հարցը լիովին չի զարգացվում գործողության միջոցով կամ գործողության մեջ, այդ պատճառով չենք տեսնում քիչ թե շատ մարմնավորված տիպեր։ Այս թերությունները բացատրվում են նկարագրելիք միջավայրի թույլ ճանաչողությամբ։ Պետրոսյանը չի ճանաչում նոր գյուղն ու գյուղացուն այնպես, ինչպես գործարանն ու բանվորին։

4) 1931 թ. տպագրված մի վիպակով («Վերելքի ճամբին») Մ. Պետրոսյանը նորից անդրադառնում է իրեն լավ ծանոթ միջավայրին՝ գործարանային կյանքին։ Այդ վիպակում ինդուստրիալ-գործարանային ստեղծագործ աշխատանքի պատկերման հետ միասին և վերջինիս ֆոնի վրա առաջ է քաշում ու հիմնականում ճիշտ լուծում նոր ընտանիքի պրոբլեմը։ Վիպակի հերոսուհի Էմման ամուսնանում է «քարշի պետ», բոլշևիկ գյուտարար Հրանտի հետ։ Կարճ ժամանակ անց հրապուրվելով քարշի պետի տեղակալ Թոմայով՝ լքում է Հրանտին։ Դեպքերի բերումով ճանաչում է անբարոյական Թոմային, խորապես գիտակցում է իր սխալը, բաժանվում նրանից և հոգեկան ծանր մաքառումներից հետո կրկին միանում Հրանտի հետ։ Մ. Պետրոսյանը վիպակի հերոսուհի Էմմայի կյանքի նկարագրությամբ ժխտում է անձնականն ամեն ինչից վեր դասող և միայն անձնական «երջանկություն» հետապնդող կնոջը և ուրվագծում նոր ընտանիքի տիպը։ Նա գտնում է՝ որ նոր ընտանիքը պետք է կազմվի իրար հասկացող, նոր կյանքին նվիրված, մի գաղափարի ու նպատակի համար մարտնչող ամուսիններից, այլապես խախուտ է ընտանիքի հիմքը և այն ենթակա է քայքայման։ Էմման լքում է Հրանտին, որովհետև իսկական կյանքի ու երջանկության մասին նրա ըմբռնումը տարբերվում է Հրանտի ըմբռնումից, որովհետև դեռևս չի կարողանում հասկանալ նոր սոցիալիստական ինդուստրիայի զարգացման հարցերով տարված ամուսնուն, չի ապրում ամուսնուն հուզող կյանքով, հաղորդակից չի լինում նրա խոհերին ու ապրումներին։ Նրան թվում է թե երջանկությունը միայն իրեն սիրելու մեջ է, այդ պատճառով առանց երկար մտածելու լքում է անձնուրաց Հրանտին ու իր բախտը կապում Թոմայի հետ, նրա մեջ տեսնելով իր «իդեալը» իրականացնողին։ Սակայն շուտով վերանում է պատրանքը. նա զգում է իր

կատարած սխալի մեծությունը, զղջում է՝ խոստանալով, որ չի հասկացել ոչ ժամանակը և ոչ էլ Հրանտին։ Էմման վերափոխվում է գործարանում, աշխատանքի մեջ, սոցիալիստական ինդուստրիայի հաղթանակի նկատմամբ Հրանտի ունեցած հավատի և այդ հաղթանակի համար նրա մղած համառ պայքարի ազդեցության տակ։ Նա հասկանում է, որ ընտանիքի հիմքը հայրենիքի սերն է և ստեղծագործ աշխատանքը։ Էմմայի վերափոխումով Պետրոսյանը գովերգում է սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքը, ընդգծելով նրա դաստիարակիչ ուժը։ «Ես նոր եմ ըմբռնում, նոր եմ հասկանում,— ասում է Էմման,— որ իսկական կյանքն աշխատանքի մեջ է, որ այդ ասպարեզում մարդիկ ավելի են ազնվանում, դառնում տոկուն ու հաստատակամ»։ Հեղինակը ցույց է տալիս, որ ով չի ապրում իր հայրենիքի կյանքով, ով չի սիրում աշխատանքը, նա չի կարող սիրել և ընտանիքը։ Ընտանեկան սերը կերտվում է աշխատանքի ու նոր կյանքի զարգացման համար մղվող համառ պայքարում։ «Մեր եռացող կյանքի հզոր ալիքները,— ասում է Հրանտը,— քեզ մղում են մի հետ ընկած գյուղ, որ արդյունաբերության զարկ տաս...ինձ էլ մի խուլ անապատ, որ նոր ուղիներ, երկաթ ռելսերի ցանցը տարածեմ... դրա մեջ է մեր մեծ թափը, մեր կյանքի հզոր հաղթանակը։ Այդտեղ է կերտվում և մեր սերը, Էմմա»։ Նմանօրինակ սերը հակադրվում է մեշչանական-սալոնային անբովանդակ սիրուն։ Այն դառնում է ոգևորության աղբյուր, նոր կյանք կառուցող մարդկանց աշխատանքային սխրագործության մղող մի ուժ։ Այդպես է ապրում Էմմային ու նրա սիրուն՝ հասարակականը անձնականից բարձր դասող, սոցիալիստական ինդուստրիայի վերելքի համար մաքառող Հրանտը։ Նա խոստովանում է արդեն վերափոխված Էմմային, որ ինքը ոգևորվել է նրանով և ավելի մեծ թափով նետվել «մեր եռացող հնոցը»։ «Չեմ ասում, որ առանց քեզ դժվար էր մաքառել, բայց դու թև ու թիկունք էիր տալիս ու ես ավելի մեծ թափով էի նետվում մեր եռացող հնոցը»։ Հրանտը ամբողջությամբ կլանված է հասարակական աշխատանքով, սովետական տեխնիկայի կատարելագործումով։ «Մեր դարը մաքառման դար է», ահա նրա նշանաբանը։ Հրանտը նոր մարդու տիպ է։ Նա իր ըմբռնումներով, համոզումներով ու բարձր բարոյականությամբ տարբերվում է վնասարար, այլասերված Թոմայից և հակադրվում նրան։ Թոմայի վարքագծի համոզիչ նկարագրությամբ Մ. Պետրոսյանը կարողանում է հակակրանք և ատելություն առաջացնել Թոմայի, նրա վնասարար հաշվապահի և նմանների նկատմամբ։ Պետրոսյանը իդեալես ժխտում է Թոմային, հաշվապահին և սովետական ինդուստրիայի առաջընթացը խանգարող բոլոր մարդկանց։ Թոմայով Պետրոսյանը զգուշացնում էր ծանր արդյունաբերության մեջ և սովետական հիմնարկներում բուն դրած վնասարարների մասին և գեղարվեստական խոսքով, հանձին Հրանտի, կոչ անում անդուլ պայքար մղել նրանց դեմ։

Լավ ճանաչելով պատկերվող միջավայրը՝ բանվորական աշխարհն ու մեքենան, Պետրոսյանը Հրանտի նորագյուտ շոգեքարշի նկարագրության առիթով ցույցարերում է շոգեքարշի մասերի մասնագետի իմացություն։ «Մ. Պետրոսյանի մոտ հետաքրքիրն այն է, դրում է Հակոբ Հակոբյանը, որ դուք նկատում եք նրա նորակառույց գյուտի վերաբերյալ մասնագետի մի ամբողջ Էնցիկլոպեդիա շոգեմեքենայի մասերի... ով ինչ ասում է թող ասի, մեր

գրականության մեջ այս հոլովում Մ. Պետրոսյանը միակն է...»[1] Հրանտի գյուտարարական գործունեությունն և հնարած շոգեքարշի փորձարկման անանախընթաց հաջողության պատկերումով Մ. Պետրոսյանը մասսայական գյուտարարության պրոպագանդա էր անում։

Որոշ թերություններով հանդերձ, բոլշեվիկյան դաղափարականությամբ հագեցված «Վերելքի համքին» վիպակում արվում է նոր մարդու, սովետական երկրի զարդացման գործին նվիրված ղեկավարի տիպը և նրա ստեղծագործ աշխատանքի ու հաղթանակի ազդեցությամբ վերափոխվող կնոջը, ինչպես նաև ուրվագծվում սովետական հայրենասիրության ու սոցիալիստական աշխատանքի հիմքի վրա կազմակերպվող նոր ընտանիքի տիպը։ Այս վիպակից հետո՝ 1932 թ. լույս են տեսնում երկու վեպեր՝ Ստեփան Զորյանի «Սպիտակ քաղաքը» և Վ. Ատրյանի «Գրոհը», որոնց մեջ սոցիալիստական շինարարության այլ ֆոնի վրա շոշափվում է միևնույն թեման՝ նոր մարդու և նոր ընտանիքի հարցը։

5) Մ. Պետրոսյանը, ինչպես ինքն է վկայում, Հակոբ Հակոբյանի դրդմամբ իր ուժերը փորձում է նաև մանկական գրականության ասպարեզում։ Նրա 30-ից ավելի մանկական պատմվածքները 1923 թվից մինչև 1932 թ. տպագրվում են «Կարմիր ծիլեր» ամսագրում։ Մանուկ սերնդի կոմունիստական դաստիարակությունը դառնում է ծերունի արձակագրի ամենասիրած գործը։ Մանկական պատմվածքներում նա պատկերում է գյուղի կոլտուրայան զարթոնքը և նոր սերնդի՝ կոմսոմոլի և պիոներիայի աշխատանքը գյուղում («Գվարդինը»)։ Մանուկների մեջ դաստիարակում է սեր դեպի աշխատանքը, սեր դեպի ուսումը, հավատ իր ուժերի նկատմամբ և դժվարություններ հաղթահարելու ամուր կամք։ «Կյանքում միշտ եղիր աշխատասեր և երբեք չես կորչի։ Մի ասի թե այս կամ այն աշխատանքը դժվար է։ Ոչ մի աշխատանք չկա, որ մարդու ուժից վեր լինի։ Հարկավոր է միայն կամք ունենալ, երկաթի պես ամուր կամք» («Փոքրիկ մեքենավարը»)։ Անցյալի դառն կյանքի և սովետական երկրի հաջողությունների նկարագրությամբ ու այլ միջոցներով պիոներների մեջ դաստիարակում է սովետական վառ հայրենասիրություն և կոչ անում միշտ «բարձր պահել այսօրվա հաղթանակի դրոշը ու իրենց ամբողջ էությամբ նվիրվել լենինյան շինարար ու բեղմնավոր աշխատանքին» («Ենվդոն»)։ Լավ ծանոթ լինելով գործարանային կյանքին, կարողանում է պարզ ու մանուկներին միանգամայն հասկանալի ձևով պատկերել այն, սեր առաջացնելով նրանց մեջ դեպի գործարանը, մեքենան, տեխնիկան («Պիոներները հնգամյակում»)։ Այս և մի քանի այլ պատմվածքներում առաջ է քաշում պոլիտեխնիկ կրթության հարցը, շմոռանալով թեորիայի և պրակտիկայի սերտ կապի անհրաժեշտությունը։ «Ինչ որ դուք սովորում եք ուսումնարաններում թեորետիկորեն, հարկավոր է գիտենալ նաև գործնականում։ Մեկը լրացնում է մյուսին։ Առանց փորձնականի դժվար է ըմբռնել թեորիան։ Ահա թե ինչու դուք պետք է լավ յուրացնեք թե մեկը և թե մյուսը»։ Այնուհետև պիոներների մեջ դաստիարակում է սեր դեպի հասարակական հանրօգուտ աշխատանքը, գրում է սոցմրցության («Սոց մրցություն»), ինտերնա-

[1] Գրականության Ինստիտուտի գրական արխիվ, գործ № 336, էջ 23։

ցիոնալիզմի («Իմ վրացի ընկերուհիները»), չինական ժողովրդի ռևոլուցիոն պայքարի, չին երեխաների վիճակի մասին և այլն։

Մ. Պետրոսյանը իր մանկական պատմվածքներով մեծապես օժանդակել է մանուկ սերնդի կոմունիստական դաստիարակության գործին, նպատակ ունենալով նրանցից պատրաստել սովետական հայրենիքին նվիրված, նրա մեծ տոհմությամբ ապրող, նրա վերելքի համար պայքարող տոկուն ու գիտակից քաղաքացիներ։

Եզրակացություն։ Պետրոսյանը առաջին հայ պրոլետարձակագիրներից է։ Նա նախահոկտեմբերյան շրջանի իր պատմվածքներում ռեալիստորեն արտացոլել է գյուղացիության, քաղաքի աշխատավորական խավերի և հատկապես բանվոր դասակարգի անտանելի ծանր վիճակը, նրա հոգեբանությունն ու ձգտումները, ցարական և կապիտալիստական կարգերի դեմ ուղղված բողոքն ու ընդվզումները։ Դասակարգային գիտակցության եկած բանվորը հայ արձակագրության մեջ առաջին անգամ մուտք է գործել Մ. Պետրոսյանի հետ միասին։ Ստեղծագործության նյութ դարձնելով բանվորն ու նրա արհամարհված աշխարհը, ուշադրությամբ հետևելով նրա կյանքին ու պայքարին՝ Պետրոսյանը կարողացել է ճշտորեն պատկերել բանվորի դասակարգային ինքնագիտակցության գալու պրոցեսը ու նրա հետ միասին տարերային խուլ բողոքից հասնել քաղաքական գործադուլի և ռևոլուցիոն պահանջների մակարդակին։ Հասունանալով բանվոր դասակարգի հետ միասին, գեղարվեստական ավելի կամ պակաս հաջողությամբ բացահայտել է բանվոր դասակարգի և կապիտալիզմի միջև եղած անհաշտելի հակասությունները և բռնել այդ հակասությունների լուծման ռևոլուցիոն ուղին։ Խորապես ըմբռնելով այդ բացահայտ ճշմարտությունը, նա, այնուհետև երբեք չի իջել բանվոր դասակարգի ռևոլուցիոն պայքարի գիրքերից։ Ի՞նչ պատմվածքների երիտասարդ ռևոլուցիոներների նման ամուր բռնած «արյուն արցունքով ձեռք բերված» ռևոլուցիայի դրոշը, քայլել է առաջ՝ ընդհուպ մինչև ցարական-կապիտալիստական դաժան կարգերի տապալումն ու պրոլետարական դիկտատուրայի հաստատումը։ Ռևոլուցիոն լավատեսությունը Պետրոսյանի պատմվածքների անգնահատելի արժանիքներից մեկն է։ Նախահոկտեմբերյան շրջանի պատմվածքներում ինչպիսի լավատեսությամբ ու հավատով արձագանքել է բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի համար մղված պայքարին, հետհոկտեմբերյան շրջանի գործերում նույնպիսի լավատեսությամբ ու հավատով էլ արձագանքել է նոր կյանք կառուցող սովետական մարդկանց աշխատանքային սխրագործություններին։ Պետրոսյանի այս շրջանի գործերը շնչում են սովետական մեծ հայրենասիրությամբ։ Ճիշտ է, նա չի կարողացել գեղարվեստական լայն կտավներով դրսևորել կատարված ռևոլուցիոն տեղաշարժերի համաշխարհային-պատմական նշանակությունը, սակայն, իր գրեթե բոլոր գործերում հանդես է բերել բոլշևիկյան սկզբունքայնություն և հավատ սոցիալիզմի հաղթանակի նկատմամբ, որոնք կազմում են նրա պատմվածքների և վիպակների ամենամեծ արժանիքը։

Гр. Григорян

Мадат Петросян

(Резюме)

Мадат Петросян является одним из представителей армянской пролетарской литературы. На литературное поприще он вступил в 90-х годах прошлого столетия. В своих повестях предоктябрьского периода Петросян реалистически отражал невыносимое, тяжелое состояние крестьянства, а также рабочего класса, их стремления, протесты, выступления, направленные против царского самодержавия. Он в своих произведениях вскрывал классовые противоречия между рабочим классом и капитализмом и становился на позиции революционного разрешения этих противоречий и установления пролетарской диктатуры. Революционный оптимизм является одним из неоценимых достоинств его рассказов. В своих рассказах дооктябрьского периода он с большим оптимизмом и верой откликнулся на борьбу рабочего класса, за его окончательную победу. В произведениях послеоктябрьского периода М. Петросян показывает трудовой героизм советских людей, строящих новую жизнь.